

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչության և Վրաստանի Հանրապետության սպորտի դեպարտամենտի համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչությունը և Վրաստանի Հանրապետության սպորտի դեպարտամենտը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի Հանրապետության կառավարության միջև 1993 թվականի մայիսի 19-ին կնքված՝ սպորտի բնագավառում համագործակցելու պայմանագրով և երկու երկրների ժողովուրդների միջև սպորտային կապերը զարգացնելու ձգտումով,

ցանկանալով ստեղծել առողջության կուլման և սպորտով պարապելու համար երկու երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցների փոխադարձ օգտագործման պայմաններ,

հաստատելով իրենց հավատարմությունը Օլիմպիական Խարտիայի նպատակներին և սկզբունքներին,

ընդունեցին համագործակցության հետևյալ սկզբունքները.

Հոդված 1

Կողմերը կնպաստեն երկկողմ համագործակցության գծով խորհրդատվությունների անցկացման նպատակով մարզական կազմակերպությունների և ֆեդերացիաների ղեկավարների փոխադարձաբար փոխանակմանը:

Կողմերը կնպաստեն.

մարզական կազմակերպությունների և ֆեդերացիաների ղեկավարների պատվիրակությունների փոխանակմանը՝ սպորտային կապերի համաձայնեցման, ինչպես նաև միջազգային և օլիմպիական շարժման պրոբլեմների հետ կապված փոխադարձ խորհրդատվությունների անցկացման նպատակով,

երկուստեք մասնակցությանը այն մրցումներին և միջազգային մարզական միջոցառումներին, որոնք կանցկացվեն այդ երկու երկրներում մարզահավաքների, համատեղ մարզումների, ընկերական և մրցութային հանդիպումների կազմակերպման նպատակով համաձայնեցված մարզումների գծով թիմերի և ակումբների, ինչպես նաև մարզիչների և մասնագետների փոխանակմանը:

Կողմերը մասնակցություն կցուցաբերեն երկու երկրներում անցկացվող սպորտի հարցերով գիտական սեմինարներին:

Հոդված 2

Կողմերը անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն սպորտի, սպորտային գիտության և բժշկության բնագավառում տեղեկության, ինչպես նաև բարձրակարգ մարզիկների և փոխարինողների պատրաստման փորձի փոխանակման ուղղությամբ:

Կողմերը կնպաստեն մարզական ակումբների, մարզիկների և ֆիզիկական դաստիարակության համակարգի աշխատողների պատրաստման կենտրոնների պատվիրակությունների փոխանակմանը, ինչպես նաև երկու երկրների մարզչական և դասախոսական կադրերի պատրաստմանը:

Կողմերն անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն մյուս Կողմից գրքերի, ձեռնարկների, հրատարակումների և ֆիլմերի փոխադարձաբար փոխանակման, ինչպես նաև տարբեր մարզաձևերի՝ տարբեր մակարդակներով և բոլոր տարիքային խմբերում, վերջին նվաճումների մարզակառույցների շինարարության և շահագործման, մարզական գույքի, սարքավորումների արտադրության բնագավառներում տեղեկության փոխանակման ուղղությամբ:

Կողմերը կապահովեն տարբեր մարզաձևերի մարզիչների, դասախոսների և այլ գիտամանկավարժական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը իրենց բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Հոդված 3

Կողմերը անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն մարզահագուստի, սարքավորումների, գույքի ձեռք բերման՝ Կողմերի պահանջարկի ուսումնասիրման և բավարարման ուղղությամբ, կնպաստեն սպորտապրանքների, մարզագույքի, սարքավորումների արտադրության համատեղ ձեռնարկությունների կազմակերպմանը և արտադրանքի իրացմանը:

Հոդված 4

Կողմերը կարծիքներ, առաջարկություններ կփոխանակեն միջազգային օլիմպիական և մարզական շարժման հարցերով, ինչպես նաև կհամակարգեն իրենց գործունեությունը այդ բնագավառում:

Հոդված 5

Կողմերը, հաշվի առնելով շինարարական և արտադրական հզորությունները, կհամագործակցեն մարզակառույցների շինարարության ու վերակառուցման գործում:

Հոդված 6

Կողմերը որոշեցին, որ սույն Համաձայնագրով նախատեսված մարզական համագործակցության ձևերը կիրականացվեն երկու պետությունների համար փոխադարձաբար ընդունելի պայմաններով: Մարզական պատվիրակություններ, թիմեր, մարզիչներ, գիտնականներ, առանձին մարզիկներ և այլ անձինք գործուղող Կողմը վճարում է մինչև Ընդունող երկրի մայրաքաղաք հասնելու և վերադառնալու ճանապարհածախսը:

Ընդունող կողմն իր վրա է վերցնում ժամանման հետ կապված բոլոր ծախսերը. տեղավորում, երկրի տարածքով մինչև մրցումների վայր հասնելը, անհրաժեշտ բժշկական սպասարկում, սննդի ապահովում և, անհրաժեշտության դեպքում, թարգմանչի տրամադրում:

Կողմերը պայմանավորվեցին, որ մարզական թիմերի, մարզիչների, գիտնականների, մասնագետների, առանձին մարզիկների և այլ անձանց՝ ծրագրերով նախատեսված ժամկետից ավել մնալը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է համաձայնեցվի երկու երկրների համապատասխան ֆեդերացիաների կամ մարզական այլ կազմակերպությունների միջև:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի՝ երրորդ երկրների հետ նրանց համաձայնագրերից բխող պարտավորությունները, երրորդ երկրների նկատմամբ չի բացառում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում մարզական համագործակցության փոխադարձաբար ընդունելի այլ ձևերը, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են ձևակերպվել լրացուցիչ՝ փոխհամագործակցության ձևերը ճշգրտող արձանագրություններում և համաձայնագրերում:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրից և կննա ուժի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը վեց ամիս առաջ գրավոր չի տեղեկացրել մյուս Կողմին սույն Համաձայնագրի գործուղությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Վանաձոր քաղաքում 1993 թվականի հոկտեմբերի 15-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և վրացերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993թ. հոկտեմբերի 15-ից: